

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Քաջարանի համայնքապետարանի կարգիների համար աշխատանքների կատարման
N ՔՀ-ԳՀԱՇՁԲ-20/02-03

ք. Քաջարան

« 01 » ապրիլի 2020թ.

Քաջարանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանի, որը գործում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արմատրոյ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արման Առաքելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **37 070 000 (երեսունյոթ միլիոն յոթանասուն հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

ստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ մեկի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը

Մտվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին: 7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 5 /հինգ /էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՈՌԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Քաջարանի համայնքապետարան

ք.Քաջարան, Լեռնագործների 4

ՀՀ ՖՆ գործառն վարչ.

հհ 900312467104

հվհհ 09426045



(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ

Ք.Սիսիան, Ա.Մանուկյան 15

«Հայրիզնեսրանկ» ՓԲԸ

հհ 1150002922490100

հվհհ 09809552



(ստորագրություն)

Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազ. ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Աշխատանքի				կատարման	
		տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1.	71241200/1	աշխատանքների կատարման տեխնիկական առաջադրանքը՝ ստորև	դրամ	9.240,00	1	ք.Քաջարան, Լեռնագործների 4	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 1 /մեկ/ ամիս
2.	71241200/2	աշխատանքների կատարման տեխնիկական առաջադրանքը՝ ստորև	դրամ	9.570,00	1	ք.Քաջարան, Լեռնագործների 4	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 1 /մեկ/ ամիս
3.	71241201/3	աշխատանքների կատարման տեխնիկական առաջադրանքը՝ ստորև	դրամ	9.790,00	1	ք.Քաջարան, Լեռնագործների 4	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 1 /մեկ/ ամիս
4.	71241200/4	աշխատանքների կատարման տեխնիկական առաջադրանքը՝ ստորև	դրամ	8.470,00	1	ք.Քաջարան, Լեռնագործների 4	պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 1 /մեկ/ ամիս

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ

I. Տեղեկատվություն առաջադրանքի վերաբերյալ

Աշխատանքի նկարագրությունը՝ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Քաջարան և Բաբիկավան բնակավայրերի բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների նախագծանախահաշվային փաթեթի կազմում և փորձաքննության եզրակացության տրամադրում

տողությունը՝ 1 ամիս
Ծրագիրը՝ **ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**
Վայրը՝ Քաջարան համայնք

1. Ընդհանուր տեղեկություններ

Քաջարան համայնքը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում: Համայնքի կենտրոն Քաջարան քաղաքի հեռավորությունը Երևանից 330 կմ է, մարզկենտրոն Կապանից՝ 25 կմ:

Համայնքի բնակավայրերի 74 բազմաբնակարան շենքերից 36-ը պանելային և կարկասային են, որից 33-ը Քաջարան քաղաքում են, 3-ը՝ Բաբիկավան բնակավայրում: 31 շենք կառուցվել է 1967-1972թթ-ին, 5-ը՝ 1982-1985թթ-ին:

Շենքերից 10-ը 9 հարկանի են, մյուսները՝ 5 և 6 հարկանի: Շենքերից 14-ը նկուղային հարկեր ունեն:

Մինչև 1990թ. շենքերը ջեռուցվում էին կենտրոնական կաթսայատան միջոցով: Այնուհետև բնակիչները անցան անհատական ջեռուցման փայտի, էլեկտրականության և գազի միջոցով: Այժմ մեծամասամբ գազով են ջեռուցվում բնակարանները:

Շենքերի տանիքների մեծ մասը 2004-05թթ վերանորոգվել են, որոնք ընթացիկ նորոգումներ չիրականացվելու պատճառով տեղ-տեղ վնասվել են:

Շենքերի էներգաարդյունավետության բարձրացման որևէ միջոցառում համայնքում չիրականացվել: Աստիճանավանդակների լուսավորությունը անհատապես է կազմակերպվում՝ անարդյունավետ եղանակներով: 1990թ.-ից շենքերի ընդհանուր օգտագործման տարրերի վերանորոգման աշխատանքներ չեն իրականացվել. պատուհանները փայտյա ու մաշված են, մեծ մասը ապակիներ չունեն, մուտքի դռները մետաղյա են, ջերմամեկուսացում չեն ապահովում:

Ջեռուցման սեզոնի տևողությունը քաղաքում 5-6 ամիս է: Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը ջեռուցման սեզոնին՝ $-1,2^{\circ}\text{C}$, միջին նվազագույն ջերմաստիճանը՝ $-5,2^{\circ}\text{C}$, բացարձակ նվազագույնը՝ -22°C :

2. Նախագծային կազմակերպության աշխատանքների շրջանակը, հիմնական առաջադրանքները և գործողությունները

Աշխատանքների շրջանակը

Ընդհանուր առաջադրանքը Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Քաջարան և Բաբիկավան բնակավայրերի բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների նախագծանախահաշվային ամբողջական փաթեթի կազմումն է:

Կազմակերպությունը պարտավոր է հաշվի առնել հետևյալ օրենսդրական, իրավական ու նորմատիվ-տեխնիկական պահանջները.

- ՀՀԸՆ 24-01-2016 «Շենքերի ջերմային պաշտպանություն»:
- ՀՀԸՆ II-7.02-95 «Շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների»:
- ՀՀԸՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն»:
- ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի n 596-Ն որոշում. «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ

փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և հայաստանի հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»:

- ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N128-Ն հրաման. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոններ»:
- ՀՀՀՆ 31-01-2014 «Բնակելի շենքեր. մաս 1. բազմաբնակարան բնակելի շենքեր» շինարարական նորմեր:
- ՀՀ կառավարության 25.12.2014թ. թիվ 1504-Ն որոշում. «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին»:
- ՀՀՀՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն»:

Նախագծային փաստաթղթերը պետք է կազմվեն ստորև աղյուսակներում ներկայացված բազմաբնակարան շենքերի համար:

Գնային առաջարկ(ներ)ը պետք է ներկայացվեն ըստ չափաբաժինների՝ յուրաքանչյուր բազմաբնակարան շենքի համար առանձնացված գնառաջարկով:

Ըստ չափաբաժինների բաշխված շենքերի ցանկ

N ^o N ^o	ՇԵՆՔԻ ՀԱՍՑԵ
1	Լեռնագործների 1,3,5,7,9,11,13,15 շենքեր
2	Խանջյան 1,1ա,2,2ա,3,3ա շենքեր Բակունց 3,4 շենքեր Շահումյան 4,6 շենքեր
3	Աբովյան 4,5,6,7,9,11,13 շենքեր Բակունց 6,7,8 շենքեր Գայ 1 շենքեր
4	Տերյան 1,2,3,4 շենքեր Բաբիկալան 1,2,3 շենքեր

ՏՎՅԱԼՆԵՐ 1-ԻՆ ՉԱՓԱՐԱԺՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՁԱԼ

Շենքի հասցե Տվյալներ	Լեռնագործներ 1	Լեռնագործներ 3	Լեռնագործներ 5	Լեռնագործներ 7	Լեռնագործներ 9	Լեռնագործներ 11	Լեռնագործներ 13	Լեռնագործներ 15
Կառուցման տարեթիվ	1968թ	1968թ	1968թ	1968թ	1966թ	1969թ	1969թ	1967թ
Շենքի տեսակը	կարկաս	կարկաս	կարկաս	կարկաս	կարկաս	կարկաս	կարկաս	կարկաս
Մուտքերի թիվը	2	2	2	2	2	2	2	2
Հարկերի թիվը	6	6	6	6	6	6	6	6
Նկուղի առկայություն	1-ին հարկը ոչ բնակելի	1-ին հարկը ոչ բնակելի	1-ին հարկը ոչ բնակելի	1-ին հարկը ոչ բնակելի	1-ին հարկը ոչ բնակելի	1-ին հարկը ոչ բնակելի	1-ին հարկը ոչ բնակելի	1-ին հարկը ոչ բնակելի
Շենքի չափերը, մ Ե/Լ/Բ	ոչ	ոչ	ոչ	ոչ	ոչ	ոչ	ոչ	ոչ
Բնակարանների թիվը	31*14*16	31*14*16	31*14*16	31*14*16	31*14*16	31*14*16	31*14*16	31*14*16
Բնակելի մակերեսը, մ²	14	14	14	14	14	14	14	14
Տանիքը ձևը, նյութը, վիճակը	893	885	885	885	885	885	885	885
Էլ. Ցանց	Թեք, թիթեղյա, բավարար	Թեք, թիթեղյա, բավարար	Թեք, թիթեղյա, բավարար	Թեք, թիթեղյա, բավարար	Թեք, թիթեղյա, բավարար	Թեք, թիթեղյա, բավարար	Թեք, թիթեղյա, բավարար	Թեք, թիթեղյա, բավարար
Գազի ցանց	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար
Ջրի ցանց	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար
Ջրահեռացում	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար

ՏՎՅԱԼՆԵՐ 2-ՐԴ ՉԱՓԱՐԱԺՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՈՅԱԼ

Շենքի հասցե Տվյալներ	Խանջան 1	Խանջան 1ա	Խանջան 2	Խանջան 2ա	Խանջան 3	Խանջան 3ա	Բակուոնց 3	Բակուոնց 4	Շահումյան 4	Շահումյան 6
Կառուցման վարելթիվ	1971թ	1971թ	1972թ	1972թ	1973թ	1973թ	1974թ	1974թ	1984թ	1984թ
Շենքի տեսակը	պանելային	պանելային	պանելային	պանելային	պանելային	պանելային	պանելային	պանելային	պանելային	պանելային
Մուտքերի թիվը	1	1	1	1	1	1	1	1	1	1
Հարկերի թիվը	9	9	9	9	9	9	9	9	9	9
Նկուղի առկայություն	1-ին հարկը՝ ոչ բնակելի	1-ին հարկը՝ ոչ բնակելի	1-ին հարկը՝ ոչ բնակելի	1-ին հարկը՝ ոչ բնակելի	1-ին հարկը՝ ոչ բնակելի	1-ին հարկը՝ ոչ բնակելի	1-ին հարկը՝ ոչ բնակելի	1-ին հարկը՝ ոչ բնակելի	1-ին հարկը՝ ոչ բնակելի	1-ին հարկը՝ ոչ բնակելի
Շենքի չափերը, մ ե/լ/բ	ոչ	ոչ	ոչ	ոչ	ոչ	ոչ	ոչ	ոչ	ոչ	ոչ
Բնակարանների թիվը	15,5*19*29,5	15,5*19*29,5	15,5*19*29,5	15,5*19*29,5	15,5*19*29,5	15,5*19*29,5	15,5*19*29,5	15,5*19*29,5	15,5*19*29,5	15,5*19*29,5
Բնակելի մակերեսը, մ²	32	32	32	32	32	32	32	32	32	32
Տանիքը	1184	1184	1184	1184	1184	1184	1184	1184	1350	1350
Տանիքը	Հարթ տանիքները փոխարինվել են թիթեղյա թեք տանիքով	Հարթ տանիքները փոխարինվել են թիթեղյա թեք տանիքով	Հարթ տանիքները փոխարինվել են թիթեղյա թեք տանիքով	Հարթ տանիքները փոխարինվել են թիթեղյա թեք տանիքով	Հարթ տանիքները փոխարինվել են թիթեղյա թեք տանիքով	Հարթ տանիքները փոխարինվել են թիթեղյա թեք տանիքով	Հարթ տանիքները փոխարինվել են թիթեղյա թեք տանիքով	Հարթ տանիքները փոխարինվել են թիթեղյա թեք տանիքով	Հարթ տանիքները փոխարինվել են թիթեղյա թեք տանիքով	Հարթ տանիքները փոխարինվել են թիթեղյա թեք տանիքով
Էլ. Ցանց	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար
Գազի ցանց	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար
Ջրի ցանց	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար
Ջրամուղացում	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար

ՏՎՅԱԼՆԵՐ 3-ԴՂ ՉԱՓԱՐԱԺՆՈՒՄ ԸՆԴԴՐԿՎԱԾ ՇՆՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շենքի հասցեն Տվյալներ	Արվմյան 4	Արվմյան 5	Արվմյան 6	Արվմյան 7	Արվմյան 9	Արվմյան 11	Արվմյան 13	Բակունց 6	Բակունց 7	Բակունց 8	Գայ 1
Կառուցման տարեթիվ	1969թ	1969թ	1970թ	1969թ	1969թ	1970թ	1969թ	1970թ	1971թ	1970թ	1971թ
Շենքի տեսակը	կարկաս	կարկաս	կարկաս	կարկաս	կարկաս	կարկաս	կարկաս	կարկաս	կարկաս	կարկաս	կարկաս
Մուտքերի թիվը	4	3	3	3	3	3	3	1	3	1	3
Հարկերի թիվը	6 1-ին հարկերը ոչ բնակելի	2 մուտք՝ 6 1 մուտք՝ 5 1-ին հարկերը ոչ բնակելի	2 մուտք՝ 6 1 մուտք՝ 5 1-ին հարկերը ոչ բնակելի	2 մուտք՝ 6 1 մուտք՝ 5 1-ին հարկերը ոչ բնակելի	2 մուտք՝ 6 1 մուտք՝ 5 1-ին հարկերը ոչ բնակելի	2 մուտք՝ 6 1 մուտք՝ 5 1-ին հարկերը ոչ բնակելի	2 մուտք՝ 6 1 մուտք՝ 5 1-ին հարկերը ոչ բնակելի	6 1-ին հարկերը ոչ բնակելի	6 1-ին հարկերը ոչ բնակելի	6 1-ին հարկերը ոչ բնակելի	6 1-ին հարկերը ոչ բնակելի
Նկուղի առկայություն	ոչ	ոչ	այո	ոչ	ոչ	այո	այո	այո	այո	այո	այո
Շենքի չափերը, մ ե/լ/բ	67*13*16	49*13*16	49*13*16	49*13*16	49*13*16	49*13*16	49*13*16	15,5*12*15	46,5*12*15	15,5*12*15	46,5*12*15
Բնակարանների թիվը	56	42	42	42	42	40	42	14	30	14	30
Բնակելի մակերեսը, մ²	1650	1072	1305	1072	1075	1284	1284	510	1530	510	1475
Տանիքը Ձևը/տյուփը/վիճակը	Թեք, թիթեղյա, բավարար Սուկա է: Բավարար	Թեք, թիթեղյա, բավարար Սուկա է: Բավարար	Թեք, թիթեղյա, բավարար Սուկա է: Բավարար	Թեք, թիթեղյա, բավարար Սուկա է: Բավարար	Թեք, թիթեղյա, բավարար Սուկա է: Բավարար	Թեք, թիթեղյա, բավարար Սուկա է: Բավարար	Թեք, թիթեղյա, բավարար Սուկա է: Բավարար	Թեք, թիթեղյա, բավարար Սուկա է: Բավարար	Թեք, թիթեղյա, բավարար Սուկա է: Բավարար	Թեք, թիթեղյա, բավարար Սուկա է: Բավարար	Թեք, թիթեղյա, բավարար Սուկա է: Բավարար
Էլ. ցանց	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար
Գազի ցանց	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար
Ջրի մատ. ցանց	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար
Ջրափեռացում	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար	Սուկա է: Բավարար

ՏՎՅԱԼՆԵՐ 4-ԴԴ ՉԱՓԱՐԱԾՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շենքի հասցեն Տվյալներ	Տեղյան 1	Տեղյան 2	Տեղյան 3	Տեղյան 4	Բաբիկական 1	Բաբիկական 2	Բաբիկական 3
Կառուցման վարժերի	1970թ	1970թ	1971թ	1971թ	1982թ	1982թ	1982թ
Շենքի տեսակը	կարկաս	կարկաս	կարկաս	կարկաս	պանելային	պանելային	պանելային
Մուտքերի թիվը	3	3	3	3	3	3	3
Հարկերի թիվը	6	6	6	6	5	5	5
Նկուղի առկայությունը	1-ին հարկը ոչ բնակելի	1-ին հարկը ոչ բնակելի	1-ին հարկը ոչ բնակելի	1-ին հարկը ոչ բնակելի	այո	այո	այո
Շենքի չափերը, մ ե/լ/բ	այո	այո	այո	այո	այո	այո	այո
Բնակարանների թիվը	46,5*12*16	46,5*12*16	46,5*12*16	46,5*12*16	58*13*16	58*13*16	58*13*16
Բնակելի մակերեսը, մ²	42	40	40	36	40	40	40
Տանիքը	1430	1410	1410	1312	1550	1550	1550
ձևը, նյութը, վիճակը	Թեք. թիթեղյա, բավարար	Թեք. թիթեղյա, բավարար	Թեք. թիթեղյա, բավարար	Թեք. թիթեղյա, բավարար	Թեք. թիթեղյա, լավ	Թեք. թիթեղյա, լավ	Թեք. թիթեղյա, լավ
Էլ. Ցանց	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար
Գազի ցանց	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար
Ջրի ցանց	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար
Ջրահեռացում	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար	Սոկա է: Բավարար

Հիմնական առաջադրանքները և գործողությունները

Մասնագիտական ծառայությունների մատուցման շրջանակներում կապալառուն պետք է իրագործի հետևյալ խնդիրները՝

1. Նկարագրել էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների լուծումները, մոտեցումները, ինչպես նաև համալիր տեխնիկական միջոցառումները (արտաքին պատեր, ծածկեր, բացվածքներ, տանիք),
2. Տրամադրել օգտագործվող շինարարական նյութերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն:

3. Նախագծի կազմը

Աշխատանքային նախագծի մշակում՝ ըստ ՀՀ կառավարությանն առնչվող քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. թիվ 128-Ն հրամանի և ՀՀ կառավարության 23.06.2011թ. N 879-Ն որոշման հավելված 1-ի՝

1. Ընդհանուր բացատրագիր:
2. Առաջին հարկի և տիպային հարկի հատակագծեր, ներառյալ նկուղային և տեխնիկական հարկերը (եթե առկա է), ցույց տալով կոնստրուկցիաների բոլոր տարրերը (երկաթբետոնե կառուցվածքային տարրեր, մետաղական կառուցվածքներ, մետաղական կոնստրուկցիաների մանրամասներ, փայտե կառուցվածքներ և այլն):
3. Շենքի ճակատների բոլոր հիմնական տարրերի կտրվածքների գծագրերը՝ տանիքածածկի, առաստաղի, արտաքին պատերի, դռների և պատուհանների, նկուղի հանգույցները և միացումները:
4. Զերմամեկուսացման շերտերի տեղադրման և ամրացման մանրամասն գծագրեր պատերի, առաստաղների, հատակի, պատուհանների և դռների հատվածներում:
5. Արտաքին պատերի մանրամասն գծագրերը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում խողովակները, ջրահեռացման խողովակները և ջրհորդանները, կախոցները, հեռահաղորդակցության ակսեսուարները և այլն:
6. Անձրևաջրերի ջրահեռացման միացումների կամ ջրահեռացման այլ համապատասխան լուծումների մանրամասն գծագրեր:
7. Գազամատակարարման և օդափոխության համակարգերի և դրանց ջերմամեկուսացման մանրամասն գծագրեր, ներառյալ առնչվող հատակագծային լուծումները և կտրվածքները:
8. Հարթակների և ասֆիճանավանդակների ներքին լուսավորության մանրամասն գծագրերը գծային սխեմայով:
9. Բոլոր նյութերի և սարքավորումների տեխնիկական մասնագրերը որոնք օգտագործվելու են շինարարության ընթացքում՝ մասնավորապես, սարքավորումների և շինվածքների մանրամասն բնութագիրը (ջերմամեկուսիչ նյութեր, պատուհաններ, դռներ, լուսավորության համակարգեր և այլն):
10. Տեխնիկական մասնագրերը պետք է նաև ներառեն վերը նշված բոլոր մեխանիկական, էլեկտրական և սանտեխնիկական սարքավորումները և նյութերը, ինչպես նաև յուրաքանչյուր համակարգի, սարքավորման կամ նյութի տեղադրման/մոնտաժման աշխատանքների մանրամասն նկարագիրը:
11. Շրջակա միջավայրի պահպանման պլան:
12. Առողջապահական և անվտանգության պլան:
13. Շինարարության կազմակերպում՝ շինարարության տևողության (ժամանակացույց) հաշվարկով:

14. Նախահաշվային փաստաթղթեր և ծավալաթերթ:

Հիմնական շինարարական նյութերի, արտադրանքների, շինվածքների և կոնստրուկցիաների հավաք ամփոփագրեր և մասնագրեր:

15. Բոլոր ամփոփագրերն ու մասնագրերը (քանդման աշխատանքներ, կառուցման աշխատանքներ) պետք է լինեն աղյուսակային տեսքի, որտեղ պետք է երևան ծավալները: Նախահաշիվը պետք է ներկայացվի առանձին բոլոր տարրերի համար (արտաքին պատեր, վերնածածկ, նկուղի ծածկ, դռներ և պատուհաններ, լուսավորություն):

Շենքի նախագծերում անհրաժեշտ է նախատեսել հետևյալ աշխատանքները՝

Տանիք

- Տանիքի առկա ջերմամեկուսիչ և ջրամեկուսիչ շերտերի ապամոնտաժում:
- Գոլորշամեկուսիչ և ջերմամեկուսիչ շերտերի պատշաճ իրականացում:
- Օդափոխության բոլոր խողովակները պետք է լինեն տանիքի ծածկից բարձր, որպեսզի համապատասխանեն գործող ստանդարտներին և նորմերին: Միահյուսված օդափոխության խողովակները պետք է ջերմամեկուսացվեն և պաշտպանվեն տանիքից վեր ձգվող մետաղյա ցինկապատ թիթեղով:

Արտաքին պատեր

- Ջերմամեկուսացնել բոլոր արտաքին պատերի մակերևույթը: Ջերմամեկուսացման տեսակից կախված մանրամասնորեն ներկայացնել տեխնոլոգիան, շերտերի և աշխատանքների իրականացման հերթականությունը և համապատասխան նյութերի մասնագրերը:

Նկուղ

- Ջերմամեկուսացնել նկուղի ծածկերը: Ջերմամեկուսացման տեսակից կախված մանրամասնորեն ներկայացնել տեխնոլոգիան, շերտերի և աշխատանքների իրականացման հերթականությունը և համապատասխան նյութերի մասնագրերը:

Պատուհաններ և դռներ

- Էներգաարդյունավետ պատուհանների տեղադրում աստիճանավանդակներում, յուրաքանչյուր հարկում առնվազն մեկ բարդ փականով և կարգավորումով:
- Ներքին պատուհանագոգերի տեղադրում, հերմետիկացում:
- Դրսից բազալտե պատուհանագոգի տեղադրում:
- Արտաքին դռների տեղադրում՝ ալյումինե պրոֆիլով և ջերմախզիչ միջուկով:
- Նախամուտքի կառուցում:
- Բոլոր դռների համար նախատեսել փակման սարք (շվեցար):

Շքամուտքերի և աստիճանավանդակների ներքին վերանորոգում

- Հարդարման բոլոր նյութերը պետք է լինեն էկոլոգիապես մաքուր, համապատասխանեն հրդեհային անվտանգության, սանիտարահիգիենիկ և այլ գործող պահանջներին (նյութի ընտրությունը համաձայնեցնել պատվիրատուի հետ):

Արհեստական ներքին լուսավորություն

- Արհեստական լուսավորության ապահովում աստիճանավանդակներում և հարթակներում՝ տեղադրելով լուսադիոդային (LED) – լուսատուներ, լուսավորության և շարժման տվիչներ, կատարելով համապատասխան հաշվարկներ (գունային ջերմաստիճանը $\leq 4,000$ °K), ցանցերի մաս-մաս և ընդհանուր փորձարկում:

Ծանուցում՝

Նախագծի բոլոր տեխնիկական բաղադրիչները, ինչպիսիք են ջերմամեկուսացումը, լուսավորությունը և այլն, պետք է հիմնավորված լինեն մանրամասն հաշվարկներով, որոնք պետք է տրամադրվեն Պատվիրատուին՝ ըստ պահանջի:

Էներգաարդյունավետության/էներգախնայողության հետ կապված բոլոր նյութերը, սարքավորումները և շինվածքները նախագծել խստորեն ըստ մանրամասն էներգետիկ հաշվարկների, ինչպես նաև առաջնորդվել «Հայաստանի Հանրապետությունում նոր կառուցվող և վերակառուցվող բնակելի, հասարակական և արտադրական շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների» խորհրդատվական ձեռնարկով, համաձայնեցնելով պատվիրատուի հետ/: Սույն ձեռնարկը հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.nature-ic.am/wp-content/uploads/2013/10/Advisory_Handbook_on_Insulation_2013.pdf

4. Ընդհանուր դրույթներ

ա. ներկայացնել մանրամասնորեն ուսումնասիրման արդյունքում հիմնավորված աշխատանքային ծավալներ;

բ. նախագիծը մշակել գործող բոլոր ՀՀ շինարարական նորմերի պահանջների համաձայն;

գ. ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի և օգտագործվող նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները,

- Կատարողը պարտավոր է ձեռք բերել շենքի բոլոր անհրաժեշտ ծավալահատակագծային փաստաթղթերը կամ իրականացնել առկա նմանատիպ շենքի մանրամասն չափագրում:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ընթացքում այն համաձայնեցնել Պատվիրատուի հետ:
- ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացույցային գրաֆիկը (ժամանակացույցը)
- շինարարական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները:

II. Հիմնական ակնկալվող արդյունքները

Առաջադրանքի վերջնական արդյունք է հանդիսանալու տիպային բազմաբնակարան շենքի էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների նախագծանախահաշվային փաթեթը՝ ներկայացված էլեկտրոնային կրիչներով (AutoCAD և PDF ձևաչափերով), և տպագիր՝ A3 ձևաչափի, 6 օրինակից: Նախահաշիվը և ծավալաթերթը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով (Excel ձևաչափով) և տպագիր՝ A4 ձևաչափով 6 օրինակից:

Նախագծային ամբողջ փաթեթը պետք է պատրաստվի հայերեն և ռուսերեն լեզվով:

III. Նախագծերի պահանջվող կազմը

Նախագծային փաստաթղթերը կազմելիս առաջնորդվել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N273-Ն հրամանով հաստատված «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոններ»-ով:

Ներկայացվող գնառաջարկը պետք է համապատասխանի ՀՀ քաղաքաշինության նախարարի 02.2008թ. N19-Ն հրամանով հաստատված «Քաղաքաշինական փաստաթղթերի/ծրագրային և ճարտարապետաշինարարական/մշակման աշխատանքների արժեքի հաշվարկման կարգով» նախատեսված սահմանաչափերին:


IV. Աշխատանքների կատարման ժամանակացույց

Նախագծանախահաշվային փաթեթների մշակման տևողությունը 1 ամիս է:

Կապալառուն ավարտված նախագծերի փաթեթը էլեկտրոնային եղանակով պատվիրատուին պետք է հանձնի պայմանագրի ստորագրման օրվանից ոչ ուշ քան 20 օրացույցային օր հետո:

Պատվիրատուն 2 օրացույցային օրվա ընթացքում կներկայացնի իր դիտողությունները, որից հետո Կապալառուն պարտավոր է իրականացնել բոլոր ուղղումներն ու փոփոխությունները և ամբողջությամբ ավարտական տեսքով վերջնական նախագծային փաթեթները հանձնել Պատվիրատուին /էլեկտրոնային և տպագիր տարբերակներով/ ոչ ուշ քան 3 օրացույցային օր հետո:

I շաբաթ	II շաբաթ	III շաբաթ	IV շաբաթ	V շաբաթ



Նախագծման ժամանակահատված

Պատվիրատուի դիտարկում

Վերջնական ուղղում, տպագրություն և հանձնում

V. Վճարման կարգը

Վճարումը կատարվում է նախագծման առաջադրանքը ամբողջությամբ ավարտելուց հետո՝ հիմք ընդունելով վերջնական արդյունքի հանձնման-ընդունման ստորագրված ակտը:

Նախագծերի տնօրինման իրավունքը պատկանում է պատվիրատուին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ


Քաջարանի համայնքապետարան

ք.Քաջարան, Լեոնազործների 4

ՀՀ ՖՆ գործառն վարչ.

հհ 900312467104

հվհհ 09426045



/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ


«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ

Ք.Սիսիան, Ա.Մանուկյան 15

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

հհ 1150002922490100

հվհհ 09809552



/ստորագրություն/
Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ. ՀՀ դրամ

Աշխատանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում	
			2-րդ եռ.	Ընդամենը
1.	71241200/1	Լեռնագործների 1,3,5,7,9,11,13,15 շենքերի էներգաարդյունավետության բարձրացման աշխատանքների համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում և փորձաքննության եզրակացության տրամադրում	9.240,00	9.240,00
2.	71241200/2	Խանջյան 1,1ա,2,2ա,3,3ա , Բակունց 3,4 , Շահումյան 4,6 շենքերի էներգաարդյունավետության բարձրացման աշխատանքների համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում և փորձաքննության եզրակացության տրամադրում	9.570,00	9.570,00
3.	71241201/3	Արուսյան 4,5,6,7,9,11,13 Բակունց 6,7,8 Գայ 1 շենքերի էներգաարդյունավետության բարձրացման աշխատանքների համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում և փորձաքննության եզրակացության տրամադրում	9.790,00	9.790,00
4.	71241200/4	Տերյան 1,2,3,4 Բաքիկավան 1,2,3 շենքերի էներգաարդյունավետության բարձրացման աշխատանքների համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում և փորձաքննության եզրակացության տրամադրում	8.470,00	8.470,00

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Քաջարանի համայնքապետարան
 ք.Քաջարան, Լեռնագործների 4
 ՀՀ ՖՆ գործառն վարչ.
 հհ 900312467104
 հվհհ 09426045



[Signature]
 /ստորագրություն/
 Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ
 Ք.Սիսիան, Ա.Մանուկյան 15
 «Հայքիզնեսբանկ» ՓԲԸ
 հհ 1150002922490100
 հվհհ 09809552



[Signature]
 /ստորագրություն/
 Կ.Տ